

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
29 հունիսի 2005թ.

ք. Չրազդան

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԸ ԿԱԶՄՈՎ՝

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Կ. ՕՍԻՊՅԱՆ

ՀԱՅՑՎՈՐ՝ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅՑՎՈՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ Ռ. ԲԱԼԱԲԱՆՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դռնբաց դատական նիստում քննեց գործն ըստ հայցի՝ Կառլոս Գրիգորի Գրիգորյանի ընդդեմ Կոտայքի մարզպետարանի, պաշտոնական /ծառայական/ բնակարանի սեփականաշնորհման պահանջի մասին և

Պ Ա Ր Զ Ե Ց.

Դիմելով դատարան՝ Կառլոս Գրիգորի Գրիգորյանը հայտնել է, որ ինքը 1978 թ-ին աշխատելով «Գրանիտ» ՀԿԲ-ում, որը հետագայում վերանվանվել է «Գալակտիկա» ՀԿԲ, որպես բնակ. կարիքավորի, Գառնի Բանավանում ստացել է պաշտոնական /ծառայական/ երկու սենյականոց բնակարան և զբաղեցրել իրեն հատկացված բնակարանը առ այսօր:

ՀՀ Կառավարության 1993թ. թիվ 635 պաշտոնական /ծառայական/ բնակարանների սեփականաշնորհման մասին որոշման համաձայն նշված բնակարանը սեփականության իրավունքով պետք է հատկացվեր իրեն: 1994-1995թ. ինքը դիմել է բնակարանը սեփականաշնորհելու խնդրանքով, սակայն օրդերի տրման, գործընթացի դանդաղման և կազմակերպությունների լուծարման հետևանքով այն ձգձգվել է մինչև 2002թ-ը:

Ներկայումս Կոտայքի մարզպետարանը մերժում է բնակարանի սեփականաշնորհման իր խնդրանքը և մատնանշելով ՀՀ վարչապետի 07.04.2004թ-ի N 099-2086 որոշումը՝ պահանջում է որպես չսեփականաշնորհված բնակարան իր կողմից զբաղեցրած վերը նշված հասցեի բնակարանը ետ վերադարձնել «Գալակտիկա» ՓԲԸ-ին:

Խնդրել է թույլատրել սեփականաշնորհելու 20 տարուց ի վեր զբաղեցրած Կոտայքի մարզի Բանավանի 2/2 հասցեում գտնվող երկու սենյականոց բնակարանը և պարտավորեցնել Կոտայքի մարզպետարանին՝ կատարելու այդ գործընթացը:

Դատարանում հայցվորը և նրա ներկայացուցիչը պնդեցին իրենց պահանջը, նշելով, որ համաձայն ՀՀ բնակ. օր-ի 102 հոդ.՝ պաշտոնական բնակելի տարածություն հատկացրած ձեռնարկությունում առնվազն տաս տարի աշխատած անձանց պաշտոնական բնակելի տարածությունից չի թույլատրվում վտարել առանց այլ բնակելի տարածություն հատկացնելու, տվյալ ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության լուծարքի կամ աշխատողների թվակազմի կամ հաստիքների կրճատման կապակցությամբ: Այսինքն՝ տվյալ դեպքում սեփականաշնորհման ձգձգումը կապված չէ իր անգործության հետ, այն իրավասու մարմինների կողմից անհիմն ձգձգումների հետևանք է: Բացի այդ առկա է կողմերի միջև 16.01.2003թ-ին կնքված վիճելի տարածքը անժամկետ հայցվորին վարձակալական հիմունքներով հատկացնելու վերաբերյալ պայմանագիրը: Դատարանից խնդրեց թույլատրել սեփականաշնորհելու իր կողմից զբաղեցրած բնակարանը, մասնավորապես, հաշվի առնելով, որ 20 տարուց ավելի զբաղեցնում է բնակարանը և պարտավորեցնել մարզպետարանին կատարելու բնակարանի սեփականաշնորհման գործընթացը: